

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի մարտի 29-ին երկօրյա պաշտոնական այցով Մայր Աթոռ ժամանեցին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Աստվածաբանական կրթության բաժանմունք»-ի տնօրեն վերապատվելի Ահարոն Սափսզյանը և նույն բաժանմունքի կոմիտեի նախագահ դոկտ. Հովարդ Միլը:

Երևանի «Զվարթնոց» նորակառույց օդանավակայանում հարգարժան հյուրերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քահանա Պետրոսյանը, Մայր Աթոռի միաբան Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը:

Այնուհետև հյուրերն առաջնորդվեցին Էջմիածնի վանք և տեղավորվեցին Մայր Աթոռի վանատանը:

ԵՀԽ-ի ներկայացուցիչները Սովետական Միություն էին ժամանել Մոսկվայի ռուսաց Պատրիարքարանի հրավերով՝ ծանոթանալու Սովետական Միությունում գործող մի շարք հոգևոր ակադեմիաների և սեմինարիաների ուսումնա-դաստիարակչական աշխատանքների դրվածքին, ուսումնական ծրագրերին և դասավանդման մեթոդներին: Այդ կապակցությամբ նրանք եղել էին Լենինգրադի, Զագորսկի և Օդեսայի հոգևոր դպրոցներում: Նույն առաքելությամբ նրանք այցելեցին նաև Մայր Աթոռ:

Մարտի 29-ի երեկոյան Մայր Աթոռի հյուրերը հոգևոր ճեմարանի տեսչարանում հանդիպում ունեցան ճեմարանի տեսչության և դասախոսական կազմի մի շարք անդամների հետ: Հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քահանա Պետրոսյանը ԵՀԽ-ի ներկայացուցիչներին հաղորդեց մանրամասն տեղեկություններ ճեմարանում դասավանդվող առարկաների, ուսումնական ծրագրերի, ուսման տևողության, ուսանողության թվի, դասավանդման մեթոդների, օգտագործվող դասագրքերի և արդյունավետ կրոնական ուսուցման նպատակով նախատեսվող ծրագրային այլ հարցերի վերաբերյալ:

Ապա հյուրերն այցելեցին հոգևոր ճեմարանի լսարաններ, հանդիսասրահ, ընթերցարան ու գրադարան:

Մարտի 30-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, Ամենայն Հայոց կաթողիկոսը Վեհարանում ընդունեց մեծարգո հյուրերին և զրույց ունեցավ նրանց հետ: Զրույցի ընթացքում ԵՀԽ-ի ներկայացուցիչները Հայոց Հայրապետին գոհունակությամբ արտահայտվեցին հոգևոր ճեմարանից իրենց ստացած տպավորությունների մասին և միաժամանակ ցանկություն հայտնեցին, որ

Հայ Եկեղեցին հետագայում առավել սերտ գործակցություն ցուցաբերի Եկեղեցիների համաշխարհային խորհրդի աշխատանքներին՝ երիտասարդ շնորհալի հայ հոգևորականների գործուն մասնակցությամբ: Զրույցն անցավ եղբայրական ջերմ ու սրտագին մթնոլորտում:

Զրույցին ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը, Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը, Տ. Եզնիկ քահանա Պետրոսյանը և Պարգև Շահբազյանը:

Ժամը 15-ին Ամենայն Հայոց Հայրապետը Վեհարանի սեղանատանը հյուրերի պատվին տվեց ճաշկերույթ:

Նույն օրը, երեկոյան, ԵՀԽ-ի ներկայացուցիչները հրաժեշտ տվեցին Նորին Սրբությանը և Մայր Աթոռից մեկնեցին լավագույն տպավորություններով:

Մայր Աթոռում հյուրընկալվելու օրերին հյուրերը Մայր տաճարում ներկա եղան առավոտյան ժամերգությանը, ծանոթացան մայրավանքի թանգարաններին, այցելեցին Գառնի, Ս. Գեղարդի վանք, Երևանի Ս. Սարգիս եկեղեցի, Երևանի նորակառույց մետրոպոլիտեն և տեսարժան այլ վայրեր: